ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էր՝ Մարուսյա Հովհաննիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին «Մեղրի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Անուշ Վարդանյանը, վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Աննա Նավասարդյանը

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2022 թվականի սեպտեմբերի 15-ի N 1 հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Հարություն Պետրոսի Բաբայանին օտարելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման

նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Սլավիկ Սերոբի Սարգսյանին օտարելու մասին
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արման Լևիկի Սահակյանին օտարելու մասին
5)«Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բարեկարգման աշխատանքները «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի կողմից իրականացնելուն համաձայնություն տալու մասին
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 98-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 24-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N87-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու,
հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 83-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն, որպես առաջնահերթ միջոցառում, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր փոխադրել քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողերից 0,09134 հեկտար /կադաստրային ծածկագիր՝ 09-005-0709-0131/՝ բնակելի տուն կառուցելու համար:
2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 84-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Գործարարների փողոց թիվ 38 հասցեում գտնվող 224,2 քմ արտաքին մակերեսով շինությունը /խանութը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,01129 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0751-0051, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19072022-09-0015 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Հարություն Պետրոսի Բաբայանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.
1) Խանութի համար՝ 90 000 դրամ x 0,1209 x 224,2 քմ = 2 439 520 /երկու միլիոն չորս հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր քսան/ ՀՀ դրամ
2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 1221 դրամ x 112,9 քմ =137851 /մեկ հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամ:
3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1՝ կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 33 000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 85-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՍԼԱՎԻԿ ՍԵՐՈԲԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաք Սայաթ-Նովայի փողոց թիվ 34 հասցեում գտնվող 45 քմ արտաքին մակերեսով շինությունը /այգետնակը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,06 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0082-0015, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21072022-09-0016 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Սլավիկ Սերոբի Սարգսյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.
1) Այգետնակի համար՝ 30 000 դրամ x 0,1209 x 45 քմ = 163215 /մեկ հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ:
2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 1221 դրամ x 600 քմ =732600 /յոթ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:
3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 86-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՄԱՆ ԼԵՎԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Փարամազի փողոց

42/15 հասցեում գտնվող 47,7 քմ արտաքին մակերեսով երկհարկանի շինությունը /ավտոտնակը և օժանդակ շինությունը / և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00293 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0025-0029, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30082022-09-0025 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Արման Լևիկի Սահակյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Երկհարկանի շինության համար՝ 10 000 դրամ x 0,1422 x 47,7 քմ = 67829 /վաթսունյոթ հազար ութ հարյուր քսանինը/ ՀՀ դրամ

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար՝ 1877,7 դրամ x 29,3 քմ =55017 /հիսունհինգ հազար տասնյոթ/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 87-Ա/

ԼՍԵՑ - «ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ «ՄԵՂՐԻ-ԱԳԱՐԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

1.Տալ համաձայնություն «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բարեկարգման աշխատանքների իրականացմանը:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 88-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի ««Մեղրի Մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 98-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 98-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ. հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է /Որոշում N 89-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 14-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 24-ի «Մեղրի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1, N2, N3 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 90-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N87-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 3-րդ հավելվածի 3-րդ կետում «Վերոնիկա Միքայելյան» բառերը փոխարինել «Անժելա Վանեսյան» բառերով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 91-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն, որպես առաջնահերթ միջոցառում, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր փոխադրել քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,05826 հեկտար բազմամյա տնկարկները /կադաստրային ծածկագիր՝ 09-005-0735-0002/՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 92-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 18-ը՝ ժամը 15:00-ն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 93-Ա/

Ավագանու անդամներ

ՍՈՆԱ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Աննա Նավասարդյանը